Հույս Հիսուս Քրիստոսի միջոցով

Ինչո՞ւ ես Հիսուս Քրիստոսի օգնության կարիքն ունեմ՝ կատարյալ դառնալու համար:

Յոթանասունից երեց Ջ. Դեվն Քորնիշն կիսվել է.

Մեր անդամները հաճախ հարցնում են. «Արդյոք ես բավականաչափ լա՞վ մարդ եմ» կամ «Արդյոք ես իսկապես կհասնե՞մ սելեստիալ արքայություն»: Իհարկե, «բավականաչափ լավը լինել» հասկացություն չկա: Մեզնից ոչ մեկը չի կարող երբևէ «վաստակել» կամ «արժանանալ» մեր փրկությանը, սակայն բնական է մտածել Տիրոջ առջև ընդունելի լինելու մասին, որը նշված հարցերի իմաստն է, ինչպես ես եմ հասկանում: . . .

Թույլ տվեք ինձ լինել շիտակ և հստակ: «Արդյո՞ք բավականաչափ լավն եմ» և «Արդյո՞ք ես կհասնեմ» հարցերի պատասխաններն են. «Այո: Դուք լավը կդառնաք» և «Այո, դուք կհասնեք սելեստիալ արքայություն, քանի դեռ շարունակում եք ապաշխարել և չեք արդարացնում ձեզ, ոչ էլ ապստամբում եք»: Երկնքի Աստվածը անգութ մրցավար չէ, որը մեզ խաղից դուրս հանելու պատճառ է որոնում: Նա մեզ կատարելապես սիրող Հայրն է, ով ամեն բանից վեր ցանկանում է, որ Իր բոլոր զավակները վերադառնան տուն և հավերժ ապրեն Իր հետ որպես ընտանիք: Նա իսկապես տվել է Իր Միածին Որդուն, որպեսզի մենք չկորչենք, այլ հավիտենական կյանք ունենանք: Խնդրում եմ հավատացեք և խնդրում եմ հույս և մխիթարություն քաղեք այս հավերժական ճշմարտությունից: Մեր Երկնային Հայրը նախատեսել է մեզ համար, որ մենք դա անենք: Դա Նրա գործն է և Նրա փառքը: (Ջ. Դեվն Քորնիշ, «Արդյոք ես բավականաչափ լա՞վն եմ: Արդյոք ես կհասնե՞մ սելեստիալ արքայություն», *Լիահոնա*, նոյեմբեր 2016, 32–33)

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի «կատարյալ դառնամ Հիսուսի միջոցով»:

Երիտասարդ Կանանց Գերագույն նախագահության նախկին առաջին խորհրդական քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին ուսուցանել է.

Սրբության մեր հույսը կենտրոնանում է Քրիստոսի, Նրա ողորմության և Նրա շնորհի վրա: Հիսուս Քրիստոսի և Նրա Քավություն հանդեպ ունեցած հավատով մենք դառնում ենք մաքուր, անբիծ, երբ մերժում ենք անաստվածությունը [տես Մորոնի 10.32–33] և անկեղծորեն ապաշխարում: Մենք մկրտվում ենք ջրով՝ մեղքերի թողության համար: Մեր հոգիները սրբագործվում են, երբ ընդունում ենք Սուրբ Հոգուն բաց սրտերով: Ամեն շաբաթ մենք մասնակցում ենք հաղորդության արարողությանը: Ապաշխարող հոգով անկեղծորեն արդարություն փափագելով՝ մենք ուխտ ենք կապում, որ պատրաստ ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները, որպեսզի մենք կարողանանք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալ: Ժամանակի ընթացքում, եթե մենք շարունակաբար ձգտում ենք միասնական դառնալ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ, մենք հաղորդակից ենք դառնում Նրանց աստվածային էությանը [տես Բ Պետրոս 1.4]: (Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Սուրբ զարդարանք», *Լիահոնա*, մայիս 2017, 10)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյլ Գ. Ռենլանդն ուսուցանել է.

Այլ խոսքով ասած, Աստված ավելի շատ հոգ է տանում այն մասին, թե ով ենք մենք, և ինչ ենք դառնում, քան այն մասին, թե ով էինք մենք մի ժամանակ: Նա հոգ է տանում, որ մենք շարունակենք ճիգ թափել: (Դեյլ Գ. Ռենլանդ, «Վերջին Օրերի Սրբերը շարունակում են ճիգ թափել», *Լիահոնա*, մայիս 2015, 56)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_273-1